



**ՀՀ տարածքային
կառավարման
նախարարություն**

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՄԱՅՆՔ 2014» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

27-ը օգոստոսի, 2014թ.,
Երևան, Հայաստան

ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

«Հայաստանի համայնքների միությունը» և ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը հայտարարում են հերթական «Լավագույն համայնք 2014» մրցանակաբաշխության մասին:

2014 թվականի համար նախատեսված են հետևյալ անվանակարգերը.

Անվանակարգեր 2014 թվականի համար

«Լավագույն համայնք 2014» անվանակարգ

- «Լավագույն քաղաքային համայնք 2014»
- «Լավագույն գյուղական համայնք 2014»

«Մաքուր համայնք 2014» անվանակարգ

- «Մաքուր համայնք 2014» (1-ին և 2-րդ մրցանակ)

«Կանաչապատ համայնք 2014» անվանակարգ

- «Լավագույն կանաչապատ համայնք 2014» (1-ին և 2-րդ մրցանակ)

«Մշակութային լավագույն համայնք 2014» անվանակարգ

- «Մշակութային լավագույն քաղաքային համայնք 2014»
- «Մշակութային լավագույն գյուղական համայնք 2014»

«Համայնքային լավագույն կայք 2014» անվանակարգ

- «Համայնքային լավագույն կայք 2014» (քաղաքային)
- «Համայնքային լավագույն կայք 2014» (գյուղական)

«Համայնքային կյանքի լավագույն լուսաբանում» անվանակարգ ՁԼՄ-ների համար

- «Համայնքային կյանքի լավագույն լուսաբանում 2014» (1-ին և 2-րդ մրցանակ)



ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

«Լավագույն քաղաքացիական նախաձեռնություն» անվանակարգ համայնքային և մարզային ոչ-պետական կազմակերպությունների համար

«Լավագույն քաղաքացիական նախաձեռնություն 2014» (1-ին և 2-րդ մրցանակ)

«Հայաստանի համայնքների միության» և ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից համատեղ անցկացվող «Տարվա լավագույն համայնք» մրցանակաբաշխությունն ամենամյա է, ավանդական բնույթ ունի և կազմակերպվում է սկսած 2006 թվականից:

Մրցանակաբաշխության արդյունքում կրնտրվեն 2014թ. լավագույն գյուղական և քաղաքային մեկական համայնք, ինչպես նաև հաղթողներ հայտարարված վերը նշված անվանակարգերով:

Մրցանակաբաշխությանը ներկայացվող համայնքների թեկնածություն կարող են առաջադրել համայնքները (ինքնառաջադրում), մարզպետարանները, այլ պետական մարմիններ, պաշտոնատար անձինք, հասարակական կազմակերպությունները եւ այլն:

Հավակնորդ համայնքի թեկնածությունն առաջադրելու համար անհրաժեշտ է «Հայաստանի համայնքների միությանը» կամ ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմին ներկայացնել համապատասխան հայտը:

Հայտի ձևերը համայնքներին կուղարկվեն էլեկտրոնային փոստով մինչև սեպտեմբերի 6-ը:

Ժամանակացույց

Մինչև հոկտեմբերի 6-ը ժամը 18.00-ն՝	Հայտերի ներկայացման վերջնաժամկետ
Հոկտեմբերի 6-10-ը՝	Գնահատող հանձնաժողովի ձևավորում
Հոկտեմբերի 10-18-ը՝	Գնահատող հանձնախմբի կողմից կարճ ցուցակի ձևավորում հանձնաժողովի անդամների կողմից անհատական գնահատման թերթիկների հիման վրա (յուրաքանչյուր անվանակարգում առավելագույնը 3-5 թեկնածու)
Հոկտեմբերի 19-ից առ նոյեմբերի 6-ը՝	Կարճ ցուցակի թեկնածուների կողմից գնահատող հանձնաժողովին լրացուցիչ պարզաբանումների ներկայացում, տվյալների ճշգրտության ստուգում, այցեր թեկնածու համայնքներ, թեկնածուների կողմից 3-րդ պեմանոց վիդեոպրեզենտացիայի պատրաստում:
Նոյեմբերի 6-8-ը՝	Ըստ անվանակարգերի հաղթողների ընտրություն
Նոյեմբեր 10՝	Պարգևատրման արարողություն

Առաջադրումներն ու կից տրվող նյութերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային փոստով (best@caa.am) կամ փակ ծրարներով (կցելով հայտը էլեկտրոնային կրիչով):

Հայտերը կգնահատվեն եւ մրցանակակիրները կորոշվեն «Հայաստանի համայնքների միության» վարչության անդամներից (որոնք առաջադրված չեն որպես թեկնածու), ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցչներից և խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրված փորձագետներից կազմված մրցանակաբաշխության հանձնաժողովի կողմից:



**ՀՀ տարածքային
կառավարման
նախարարություն**

Գնահատող հանձնաժողով (15 անդամ)

- Գնահատող հանձնաժողովը կազմաված է Միության խորհրդի 12 անդամից (Յուրաքանչյուր մարզից 1 ներկայացուցիչ, գործադիր տնօրեն, նախագահ)
- Տարածքային կառավարման նախարարության 3 ներկայացուցիչներից
- Խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել նաև փորձագետներ

Հավակնորդների առաջարդման վերջնաժամկետը 2014թ. հոկտեմբերի 6-ն է (ներառյալ):
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Վերջնաժամկետից ուշ ստացված դիքումները չեն ընդունվում:

Մրցանակների հանձնման արարողությունը տեղի կունենա 2014թ. նոյեմբեր 10-ին:

0025, Երևան, Հայաստան
Չարենցի 1, 2-րդ հարկ
Հեռ.՝ +374 10 57 45 01, Ֆաքս՝ +374 10 57 52 19
e-mail: info@caa.am ,
www.caa.am